ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 545 - Ա

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԶԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 20,933,180 դրամ ընդհանուր արժողությամբ «Մարզահրապարակների կառուցում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գրաֆեն-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00126761) 2024 թվականի հուլիսի 11-ին կնքված՝ թիվ ՀՀ-ՄՀ01/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզահրապարակի գույքի գնման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 6,468,940 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գրաֆեն-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00126761) 2024 թվականի հուլիսի 11-ին կնքված՝ թիվ ՀՀ-ՄՀ-03/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է

մարզահրապարակի գույքի գնման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 7,202,120 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Գրաֆեն-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00126761) 2024 թվականի հուլիսի 11-ին կնքված՝ թիվ ՀՀ-ՄՀ-02/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզահրապարակի գույքի գնման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 7,262,120 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

06.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ